հագնուած, նստել էր եւ ղահոէ էր խմում: Նա իր սովորական քաղցրութեամբ նայեց այցելուների վրայ, ասելով.

— Նստեցէք, խնդրեմ, — եւ տեղ ցոյց տոեց իրան շատ մօտ:

Նրանք անշարժ մնացին եւ սկսեցին անվճռական կերպով նայել միմեանց երեսին:

— Նստեցէք, խնդրեմ, — կրկնեց Ասլանը: — Ինչո՞ւ էք կանգնած:

— Ձեր սպասում, յարգելի բժշկապետ, ինչպէ՞ս կը համարձակուենք մենք նստել, — պատասխանեց մահտեսին ողորմելի ձայնով եւ ամբողջ հասակով աւելի պինդ սեղմուեցաւ պատի հետ: Միւսներն էլ հետեւեցին նրա օրինակին:

— Ես խօ փաշայ չեմ, որ ինձ մօտ չհամարձակուէք նստել, — ասաց Ասլանը ծիծաղելով:

— Այդ ինչո՞ւ ես ասում, յարգելի բժշկապետ, — այժմ պատասխանեց մահտեսու մօտ կանգնած կարճահասակ ծերունին: — Դու մեզ համար փաշայից էլ մեծ ես, խոնթքարից էլ մեծ ես, դու մեր աչքի լոյսն ես. աստուած քեզ հազար տարի կեանք տայ: Փաշան մեր հաւատից չէ, իսկ դու թէեւ ֆրանկ ես, բայց մեր հաւատիցն ես. մենք ամենքս միեւնոյն խաչն ենք պաշտում, միեւնոյն սրբերին ենք երկրպագում:

Եթէ մի ուրիշը Ասլանի տեղ լինէր, կամ նրանց համեստութեանը եւ կամ միամտութեանը կը վերաբերէր այդ բոլոր շողոքորթութիւնները: Բայց Ասլանը իսկոյն հասկացաւ, թէ ինչ տեսակ մարդկանց հետ գործ ունի, եւ ոչինչ չցոյց տալով, դարձեալ խնդրեց, որ նստեն:

— Վերջապէս խնայեցէք իմ երիտասարդութեանը, — ասաց նա, — արժան չէ, որ դուք ձեր ճերմակ ալիքներով կանգնած մնաք իմ առջեւ. ես յարգում եմ ծերութիւնը:

— Օրհնեա՛լ լինես, — բացականչեցին երեքն էլ միաձայն եւ նստեցին ոչ թէ Ասլանի ցոյց տոած տեղում, այլ հեռու, դռան մօտ:

Հարցնելով, թէ ինչ նպատակով են եկել, Ասլանը խնդրեց, որ ցոյց տան իրանց բերած իրեղէնները: Մէկը քաղաքավարութեան համար երեսը շուռ տոեց դէպի պատը եւ երկու անգամ հազաց: Եթէ այդ հազը նրանց մէջ մի պայմանական նշանակութիւն չլինէր, պէտք էր, իրաւ, վերին աստիճանի քաղաքավարութիւն համարել, որովհետեւ հազալու միջոցին նրա դէմքը խիստ ծիծաղելի եւ, միեւնոյն ժամանակ, զզուելի արտայայտութիւն ընդունեց: Իսկ մահտեսին պատասխանեց առաջին հազալուն երկու անգամ փռթկալով: Նա էլ քաղաքավարութեան համար իր անթարիի (հագուստի) դրօշակը